

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/4

31 հուլիս 2015 թ.

Քննարկվեց ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Ս.Ալեքսանյանի 14.07.2015 թ-ի դիմում-բողոքը:

ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Ս.Ալեքսանյանի բողոքում բերված փաստարկները.

«ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ն զբաղվել է մետաղի ջարդոնի արտահանմամբ: Անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ թիվ ԵԱՔԴ 1314/02/13 քաղաքացիական գործով «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ ներկայացուցիչ Մ.Աղաբաբյանը 20.08.2014թ.-ին դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը (այսուհետ՝ վարչական մարմին), խնդրելով տրամադրել համապատասխան տեղեկատվություն թիվ C48981 բեռնամաքսային հայտարարագրով ապրանքների մաքսային ձևակերպման հետ կապված վարչական վարույթի վերաբերյալ, ինչպես նաև որ իրավական նորմի հիման վրա է մաքսային մարմնի կողմից 02/8-2/(389614)13 24.05.2013թ.-ի գրությամբ թույլատրվել «ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ-ին իրականացնել «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ին պատկանած ապրանքի բեռնաթափումը: Գրությանը կից ներկայացվել է «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ կողմից տրամադրված լիազորագիրը:

Ի պատասխան, վարչական մարմինը թիվ 11-5/13206-14 առ 29.08.2015թ.-ի գրությամբ հայտնել է ներկայացուցչին, որ պահանջվող տեղեկությունների տրամադրման հարցին հնարավոր կլինի անդրադառնալ ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրի ներկայացման դեպքում:

«ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ ներկայացուցիչ Ս.Ալեքսանյանը 12.05.2015թ.-ի գրությամբ նույնպես դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը նմանատիպ խնդրանքով և գրությանը կից ներկայացվել է «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ կողմից տրամադրված լիազորագիրը:

Ի պատասխան, վարչական մարմինը թիվ 11-5/12358-15 առ 18.05.2015թ.-ի գրությամբ հայտնել է ներկայացուցչին, որ պահանջվող տեղեկությունների տրամադրման հարցին հնարավոր կլինի անդրադառնալ ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրի ներկայացման դեպքում:

19.06.2015թ.-ին կրկին ներկայացվել է գրություն նույն պահանջով (ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.06.2015թ.)՝ կից ներկայացնելով նաև անհիմն պահանջվող համապատասխան պայմանագիր՝ կնքված «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ և «ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ» ՍՊԸ միջև: Սակայն Վարչական մարմինը, ի պատասխան կրկին ներկայացված գրությանը, թիվ 11-5/16501-15 առ 24.06.2015թ. գրությամբ կրկին մերժել է պատճառաբանելով, թե 04.07.2014թ. իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի կողմեր են հանդիսանում «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» և «ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ» ՍՊԸ-ները, հետևաբար նշված պայմանագիրը չի կարող դիտվել որպես «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ին իրավաբանական ծառայություններ մատուցելու իրավական հիմք:

Վարչական մարմինը՝ մերժելով համապատասխան տեղեկատվության տրամադրումը թույլ է տվել օրենքի խախտումներ հետևյալ պատճառաբանությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ վարչական մարմինը պարտավոր էր տրամադրել հնարավորություն ծանոթանալու վարչական վարույթի նյութերին, օգտվելով իրեն՝ վարչական վարույթի մասնակցի ներկայացուցչին ընձեռնված իրավունքից:

Վարչական մարմինը պարտավոր էր տրամադրել տեղեկատվություն և հնարավորություն ծանոթանալու վարչական վարույթի նյութերին և անելու պատճեններ ու քաղվածքներ, նույնիսկ ներկայացված լիազորագրի առկայության պարագայում՝ առանց ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու: Ներկայացված լիազորագիրը լիովին բավարար էր, որպեսզի Վարչական մարմինը իրականացներ իր պարտականությունը:

Ելնելով համապատասխան տեղեկատվության և վարչական վարույթից քաղվածքներ և պատճեններ ստանալու հարցն արտադատական կարգով լուծելու ցանկությունից, ևս մեկ անգամ ներկայացվում է համապատասխան պահանջը ներքոհիշյալի հետ կապված:

19.08.2011թ.-ին «ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ-ի և «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ԱԳ/11411 պայմանագրի կատարման շրջանակներում «ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ-ի կողմից «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ին է տրամադրվել թվով 58 բեռնարկեր թուջի ջարդոն բարձելու համար: Նշված բեռնարկերը պահպանության համար տեղադրվել են «ԱՊԱՎԵՆ ՏԵՐՄԻՆԱԼ» ՓԲԸ-ին պատկանող տարածքում, որոնց կապարակնքումն ՀՀ ԿԱ ՊԵԿ ՆՀՎ աշխատակիցների կողմից և մաքսային ձևակերպումներն ավարտվել են 2012թ.-ի դեկտեմբերի 29-ին:

29.12.2012թ. գնահատվել է թիվ 048981 բեռնամաքսային հայտարարագիրը (ապրանքի անվանումը ճուլված չուգունի մնացուկներ, 36 բեռնարկը ընդհանուր քաշը՝ 1.001.159 կգ.), ընտրվել է կարմիր ուղի, մաքսային մարմնի աշխատակցի կողմից իրականացվել է փաստաթղթերի ստուգում, սակայն կարմիր ուղուց չի հանվել և մաքսային վճարումներ չեն կատարվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2012թ. դեկտեմբերի 30-ից Ամանոր և Սուրբ Ծննդի հետ կապված սկսվում են տոնական օրերը, «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ն 2012թ.-ի դեկտեմբերի 29-ին գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին թույլատրելու բեռի մաքսային ձևակերպման արտաժամյա իրականացում, սակայն մաքսային մարմինների կողմից առանց իրավական հիմնավորման չի թույլատրվել մաքսային ձևակերպումների արտաժամյա իրականացումը և կապարակնքված բեռնարկերի առաքումը՝ բանավոր պատճառաբանելով, թե սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում է կատարվել, որն ուժի մեջ է մտել 2013թ. հունվարի 7-ին: Այսինքն, «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ն իր իրավասության սահմաններում դեռևս մինչև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին թիվ ՀՕ253-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը կատարել է իր պարտականությունները մաքսային ձևակերպումների համար, սակայն մաքսային մարմինների կողմից առանց հիմնավորման չի թույլատրվել մաքսային ձևակերպումների արտաժամյա իրականացումը և բեռնարկերի առաքումը:

«ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ ԱՊ-159 առ 29.04.2013թ. գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին (մուտքի թիվ 4937-13 առ 30.04.2013թ) խնդրելով թույլտվություն՝ 53 բեռնարկղ թուջի ջարդոնը մաքսային հսկողության ներքո բեռնաթափել «ԱՊԱՎԵՆ ՏԵՐՄԻՆԱԼ» ՓԲԸ ՄՀԳ տարածք և այն վերցնել պատասխանատու պահպանության, որի իրավասությունը նա չունի, քանի որ միայն բեռի սեփականատերը կարող էր դիմել իր բեռը բեռնաթափելու խնդրանքով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալը թիվ 02/8-2/389614-ի առ 24.05.2014թ.-ի գրությամբ հանձնարարել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախաբացթողումային հսկողության վարչության պետին հետևյալի մասին.

«Ի պատասխան «ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրենի 29.04.2013թ. թիվ ԱՊ-159 գրության տեղեկացվում է, որ գրությամբ նշված դեպքում վերոհիշյալ մաքսային ռեժիմներից որևէ մեկով բեռնամաքսային հայտարարագրի առկայության պարագայում առաջարկվում է մաքսային ապահովման միջոցը վերացնել կամ փոփոխել հայտարարագիրը սահմանված կարգով անվավեր համարվելուց հետո: Հայտարարագրված չլինելու դեպքում առաջարկվում է, եթե բեռի բացման և մաքսային ապահովման միջոցի կիրառման վերաբերյալ կազմվել է տեղեկանք, մաքսային ապահովման միջոցը վերացնել կամ փոփոխել համապատասխան արձանագրություն կազմելու միջոցով»: Այսինքն, մաքսային մարմինը, առանց ապրանքի սեփականատիրոջը տեղյակ պահելու, թույլատրել է իրականացնել 58 բեռնարկղ ապրանքի բեռնաթափում»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 39-րդ հոդվածներով՝ բողոքաբերը խնդրում է հայտնել՝

1. Թե, որ իրավական նորմի հիման վրա մաքսային մարմինը չի թույլատրել «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ին արտահանել թիվ C48981 բեռնամաքսային հայտարարագրով մաքսային ձևակերպումների արտաժամյա իրականացումը և բեռնարկղերի առաքումը,

2. Որ իրավական նորմի հիման վրա է 24.05.2013թ.-ի թիվ 02/8-2/-389614-13 գրությամբ թույլատրվել «ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ-ին իրականացված «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ին պատկանած ապրանքի բեռնաթափումը,

3. Միաժամանակ տրամադրել վերը նշված հարցերի հետ կապված համապատասխան վարչական վարույթների նյութերը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Ս.Ալեքսանյանը (այսուհետ նաև բողոքաբեր) 13.05.2015թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և խնդրել է տրամադրել համապատասխան տեղեկատվություն թիվ C48981 բեռնամաքսային հայտարարագրով ապրանքների մաքսային ձևակերպման հետ կապված վարչական վարույթի վերաբերյալ, ինչպես նաև որ իրավական նորմի հիման վրա է մաքսային մարմնի կողմից 02/8-2/(389614)13 24.05.2013թ.-ի գրությամբ թույլատրվել «ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ-ին իրականացնել «ՍՈՍ-

ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ին պատկանած ապրանքի բեռնաթափումը: Գրությանը կից Ս.Ալեքսանյանի կողմից ներկայացվել է «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ կողմից տրամադրված լիազորագիրը:

«Քինանսների նախարարության 18.05.2015թ.-ի թիվ 11-5/12358-15 պատասխան գրությամբ հայտնվել է, որ ներկայացնելով վստահորդի շահերը որպես փաստաբան Ս.Ալեքսանյանը գործում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում, հետևաբար անհրաժեշտ է հաշվի առնել նաև վերոհիշյալ օրենքի 5-րդ հոդվածով ամրագրված փաստաբանական գործունեության՝ որպես ձեռնարկատիրական գործունեություն հանդես գալու հանգամանքը:

«Քինանսների նախարարության 18.05.2015թ.-ի թիվ 11-5/12358-15 գրությամբ հայտնվել է նաև.

««Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ փաստաբանը իրավունք ունի դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու պահանջով: Համապատասխան պայմանագրի ներկայացման դեպքում կհավաստվեր Ձեր կողմից «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ իրավաբանական օգնություն ցույց տալու հանգամանքը՝ հետևաբար նաև համապատասխան տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Ելնելով վերոգրյալից և այն հանգամանքից, որ ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն (այդ թվում ծառայությունների մատուցում) իրականացնող տնտեսվարող սուբյեկտի կնքած պայմանագրերը հասու են հարկային մարմիններին ծանոթացման և ստուգման առումով, իսկ ՀՀ Քինանսների նախարարությունը հանդիսանում է նաև վերադաս հարկային մարմին, պահանջվող տեղեկությունների տրամադրման հարցին հնարավոր կլինի անդրադառնալ ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրի ներկայացման դեպքում»:

Բողոքաբերի կողմից 19.06.2015թ.-ին կրկին անգամ ներկայացվել է նույնաբովանդակ գրություն, որին կից ներկայացվել է նաև համապատասխան պայմանագիր՝ կնքված «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ և «ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ» ՍՊԸ միջև:

«Քինանսների նախարարության 24.06.2015թ.-ի թիվ 11-5/16501-15 պատասխան գրությամբ հայտնվել է, որ գրությանը կից ներկայացված 04.07.2014թ.-ի իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի կողմեր են հանդիսանում «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» և «ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ» ՍՊԸ-ները, հետևաբար նշված պայմանագիրը չի կարող դիտվել որպես բողոքաբերի կողմից «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ին իրավաբանական ծառայություններ մատուցելու իրավական հիմք:

Քննարկվող դեպքում 13.05.2015թ.-ի գրությամբ բողոքաբերը խնդրել է տրամադրել համապատասխան տեղեկատվություն «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ վերաբերյալ:

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով ՀՀ Քինանսների նախարարության 18.05.2015թ.-ի թիվ 11-5/12358-15 գրությամբ բողոքաբերին պատասխանվել է, որ պահանջվող տեղեկությունների տրամադրման հարցին հնարավոր կլինի անդրադառնալ «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ին ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրի ներկայացման դեպքում:

Բողոքաբերի կողմից 19.06.2015թ.-ի գրությամբ ներկայացվել է համապատասխան պայմանագիր՝ կնքված «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ և «ՄԵԼԻՔ-

ԹԱՆԳՅԱՆ» ՍՊԸ միջև: Սակայն, քանի որ 04.07.2014թ-ի Իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի կողմեր են հանդիսանում «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» և «ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ» ՍՊԸ-ները, հետևաբար ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ.-ի թիվ 11-5/16501-15 գրությամբ հայտնվել է, որ նշված պայմանագիրը չի կարող դիտվել որպես բողոքաբերի կողմից «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ին իրավաբանական ծառայություններ մատուցելու իրավական հիմք:

Հանձնաժողովի համոզմամբ հաշվի առնելով, որ բողոքաբերի կողմից ներկայացված 04.07.2014թ-ի Իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի կողմերը հանդիսանում են «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» և «ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ» ՍՊԸ-ները, հետևաբար նշված պայմանագրով չի հիմնավորվում բողոքաբերի կողմից «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ին իրավաբանական ծառայություններ մատուցելու հանգամանքը:

Բողոքի քննության ընթացքում բողոքաբերը հայտարարեց, որ հանդիսանում է «ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ» ՍՊԸ-ի հիմնադիրը, սակայն վերջինիս անունից հանդես գալու իրավասություն ունենալու վերաբերյալ որևէ ապացույց Հանձնաժողովին չ'ներկայացվեց:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ բողոքաբերի պահանջը, «ՍՈՍ-ՍՏԻՄՈՒԼ» ՍՊԸ-ի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու մասին, չի կարող բավարարվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Ս.Ալեքսանյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ